ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ թ. N_____- Ն

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ4» կետով՝ Կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել վայրի կենդանիների՝ ազատ պայմաններում վերաբնակեցման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Կառավարության _____ թվականի

_____ « » N –Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ՝ ԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ

1. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետությունում վայրի կենդանիների՝ ազատ պայմաններում վերաբնակեցման հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում վայրի կենդանիների՝

ազատ պայմաններում վերաբնակեցումն (այսուհետ՝ Վերաբնակեցում) իրականացվում է համաձայն յուրաքանչյուր կենդանական տեսակի համար կազմված վերաբնակեցման ծրագրի: Ծրագիրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում պետական լիազորված մարմին (այսուհետ՝ լիազորված մարմին), որի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է թույլտվություն, բացառությամբ Կառավարության կողմից հաստատված վերաբնակեցման ծրագրերի:

3. Վերաբնակեցման ծրագիրը ներառում է՝

- Վերաբնակեցման նպատակը,
- Վերաբնակեցվող կենդանական տեսակի (հայերեն և լատիներեն անվանումները), առանձնյակների քանակի, սեռի, տարիքի և այլնի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն սույն կարգի ձևի,
- Վերաբնակեցման ենթակա տարածքի կենսամիջավայրի ներկա վիճակի և ներուժի գնահատումը՝ նախատեսվող վերաբնակեցման տարածքում իրականացված գիտական ուսումնասիրությունների, տվյալ տարածքում վերաբնակեցվող կենդանական տեսակի առկայության, կամ դրա վերաբերյալ գրական տվյալների առկայության (եթե նախկինում հանդիպել է և ներկայումս չի հանդիպում) մասին համապատասխան տեղեկատվությունը,
- Վերաբնակեցման արդյունքում հնարավոր ռիսկերի գնահատումը և վերլուծությունը՝ յուրաքանչյուր կենդանական տեսակի առանձնահատկություններով պայմանավորված՝ ներառյալ սոցիալական, տնտեսական և բնապահպանական հարցերը,
- Վերաբնակեցման ծրագրի իրականացման և վերաբնակեցված տեսակի մոնիթորինգային պլանի կազմումը,
- բաց թողնման վայրերի ընտրության գործընթացում շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքները,
- Վերաբնակեցման ծրագրի վերաբերյալ «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասով սահմանված սուբյեկտներից որևէ մեկի կողմից տրամադրված դրական եզրակացությունը:

4. Սույն կարգի 3-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված մոնիթորինգը կազմակերպվում և իրականացվում է լիազորված մարմնի կողմից:
5. Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում վայրի կենդանիների բնություն բաց թողնման գործընթացը համակարգվում է աշխատանքային խմբի կողմից, որի կազմը և աշխատակարգը հաստատվում է լիազորված մարմնի կողմից:

ՁԱ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Վերաբնակեցման ենթակա վայրի կենդանական տեսակ(ներ)ը (հայերեն և լատիներեն անվանումները)

_____
_____
_____

2.Վերաբնակեցման ենթակա վայրի կենդանական տեսակ(ներ)ի համար նախատեսված անազատ և կիսաազատ պայմաններում պահման տարածքի չափը և զոոհիգիենիկ բնութագիրը

_____

_____

_____

3. Վերաբնակեցման ենթակա վայրի կենդանական տեսակ(ներ)ի համար անհրաժեշտ գույքի և սարքավորությունների բնութագիրը

_____

_____

_____

4. 4. Այլ տեղեկություններ

_____

_____

_____

Պարտավորվում եմ Թույլտվությունը ստանալուց հետո եռամ
ժամկետում սահմանել և լիազորված մարմին ներկայացնել յ
կենդանական տեսակի համար նախատեսված սննդակարգ

Պարտավորվում եմ Թույլտվությունը ստանալուց հետո եռամ
ժամկետում սահմանել և լիազորված մարմին ներկայացնել յ
կենդանական տեսակի համար նախատեսված պարտադիր
անասնաբուժական զննումների գրաֆիկ

_____ _____

(կենսաբանության կամ կենդանաբանության կամ

տվյալ բնագավառում որակավորված մասնագետի

անունը, ազգանունը)

(ստորագրություն)

__ _____ 202 թ.